ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 13

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՊՈՒՇԿԻՆՈ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

17.05.2017թ.

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 95-99 հոդվածների պահանջներով, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի 2017 թվականի հունվարի 20-ի N 15-Ա որոշումը՝

ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Ալիկ Սահակյանի /հանձնաժողովի նախագահ/, ՀԳՄՏՍ գործունեության համակարգման բաժնի պետ Վարդան Հովհաննիսյանի, հաշվապահական հաշվառման բաժնի պետ Արտավազդ Բեջանյանի, հողաշինության և հողօգտագործման բաժնի առաջատար մասնագետ Էդգար Հախվերդյանի, ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ Սասուն Խեչումյանի, քաղաքաշինության վարչության առաջատար մասնագետ Արման Մխիթարյանի, ճարտարապետաշինարարական բաժնի գլխավոր մասնագետ Գագիկ Հախինյանի, զորահավաքային նախապատրաստության բաժնի պետ Սպարտակ Ղուբաթյանի և սոցիալական ապահովության բաժնի առաջատար մասնագետ Վաղարշակ Եղիազարյանի կողմից իրականացվեց իրավական և մասնագիտական հսկողություն ՀՀ Լոռու մարզի Պուշկինո համայնքում՝ ՏԻՄ-երի լիազորությունների, հողօգտագործման, ՔԿԱԳ, առողջապահության, քաղաքաշինության, պաշտպանության և սոցիալական պաշտպանության ոլորտներում:

1. Իրավական և մասնագիտական հսկողության արդյունքների ամփոփման արդյունքում կազմվեց սույն արձանագրությունը կից հավելվածով ներկայացված՝ հայտնաբերված խախտումների, հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման ուղղությամբ առաջարկությունների, ինչպես նաև հայտնաբերված խախտումների վերացման նպատակով առաջարկվող ժամկետների վերաբերյալ:

2. Առաջարկությունները նշված ժամկետում չկատարելու դեպքում այն կբողոքարկվի դատական կարգով՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

3. Նշումներ /համայնքի ղեկավարի առարկությունները իրավական և մասնագիտական հսկողության արդյունքների և իրավական և մասնագիտական հսկողությունը իրականացնող պաշտոնատար անձանց գործողությունների վերաբերյալ/

---

4. Արձանագրությունը կազմված է երկու օրինակից, որից մեկ օրինակը հանձնվում է ՀՀ Լոռու մարզպետարանին, իսկ մյուս օրինակը ներկայացվում է Պուշկինո համայնքի ղեկավարին:

Ալիկ Սահակյան _____

Վարդան Հովհաննիսյան _____

Արտավազդ Բեջանյան _____

Էդգար Հախվերդյան _____

Գագիկ Հախինյան _____

Սասուն Խեչումյան _____

Արման Մխիթարյան _____

Սպարտակ Ղուբաթյան _____

Վաղարշակ Եղիազարյան _____

Համայնքի ղեկավար՝
Սուրեն Ավետիսյան _____